

ԷԶՄԻԱԾՆԻ ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԴԻՄՆԱԴՐԱՄԻ
ՏՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ԽՐԱԽՃԱՆՔԸ

Առաջնորդ Սրբազան Զոր Նախագահութեամբ եւ մասնակցութեամբ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Զոզ. Տ. Տաճատ Ծ. Կրդ. Եարտըմեանի եւ Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Զայց. Եկեղեցւոյ Զոգելոր Զովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեանի, Էջմիածնի Փոքրիկներու Զիմնադրամի 5րդ Տարեկան ճաշկերոյթ-խրախճանքը տեղի ունեցաւ Շաբաթ, Յունուար 16ի երեկոյեան, Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Զայց. Եկեղեցւոյ Սրահին մէջ:

Գործադրուեցաւ կարճ յայտագիր մը: Զանդիսավարն էր Ալ Կապրալօֆ: Սեղաններուն օրհնութիւնը կատարեց Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեան: Ընթրիքի ընթացքին տեսերիզի մը ցուցադրութիւնը տեղի ունեցաւ, որ կը նկարագրէր Թեմիս կողմէ Զայաստանի որբերուն յատկացուած օգնութիւնը եւ անոնց կեանքին մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը դէպի բարելաւում եւ երջանկութիւն:

Խօսք առաւ Էջմիածնի Փոքրիկներու Զիմնադրամի Յանձնախումբի Ատենապետ՝ Տիկին Գայիանէ Թաթուլեան, որ տեղեկութիւններ տուաւ հիմնադրամի շնորհիւ արձանագրուած յաջողութիւններու մասին: Իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Զոր, որ մօտէն կը հետաքրքրուէր հիմնադրամի աշխատանքով՝ լաւագոյնս օգտակար հանդիսանալու համար մեր որդեգրած որբերուն եւ կարիքաւորներուն:

Ապա, Սրբազան Զայրը շեշտեց Էջմիածնի Փոքրիկներու Զիմնադրամին կատարած մարդասիրական առաքելութիւնը, շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց նուէրներով կը հովանաւորեն մեր որբերը: Մասնաւոր գնահատանքի արժանացուց Ատենապետ՝ Տիկին Գայիանէ Թաթուլեանը եւ յանձնախումբի անդամները: